

---

---

ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

(Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակի առթիվ)

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Անին՝ Բագրատունիների հայ թագավորական գերդաստանի պերճաշուք մայրաքաղաքը, մոտ մեկ դար Հայաստանի ամենահարուստ ու շքեղ քաղաքն էր՝ հայ պատմիչների կողմից անվանված «տիեզերահռչակ»: XI դ. նշանավոր պատմիչ Արիստակես Լաստիվերցին իր «Պատմության» ԻԴ գլուխն անվանել է «Տիեզերահռչակ Անի քաղաքի սրով խողխողման մասին»<sup>1</sup> և նշել, թե քաղաքը եղել է հարստության, զվարճության ու վայելքի վայր:

XIX դարում, երբ Եվրոպայում ու Ռուսաստանում մեծացավ հետաքրքրությունը դեպի մարդկության հնագույն քաղաքակրթության հետազոտումը, շատ ճանապարհորդ գիտնականներ են այցելել Հայաստանի Անի մայրաքաղաքի ավերակները դիտելու և այդ մասին թողել են իրենց նկատումներն ու տպավորությունները: Անին հետաքրքիր էր նաև ռուսական գիտությանը, քանի որ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո (1828 թ.) Անին մտել էր ռուսական կայսրության մեջ:

Անի մայրաքաղաքի նկատմամբ հատուկ վերաբերմունք է ունեցել հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Նրա նպատակն էր հայոց հին պատմության կարևոր դեմքերի, քաղաքակրթության նվաճումների մասին հնարավորինս տեղեկացված պահել իր ժամանակի առաջավոր երկրների հանրությանը, հայ ժողովրդին ճանաչել տալ համայն մարդկությանը բերած իր նպաստով: Աբովյանն իրատեսորեն այդ խնդրի լուծումը կապում էր հենց իր ժողովրդի շահագրգիռ մտավորականների ու ազգանվեր գործիչների հետ. «Ձե՛զ եմ ասում՝ Ձեզ Հայոց նորահաս երիտասարդը՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցեք... Բաս չե՛ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրեք, ազգի միջումը անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը հավիտյանս հավիտենից մնա անմահ»<sup>2</sup> (ընդգծումը մերն է.՝ Ա. Դ.): Իր գլուխգործոցում՝ «Վերք Հայաստանի» վեպում, Աբովյանը հիացմունքով է խոսում Անի մայրաքաղաքի մասին, որի ավերակներում պատուպարվել էին Աղասին ու նրա ընկերները. «Աղասու ընկերքը Անի քաղաքի բուրջը մտան ու էնտեղ, ուր հարյուրավոր եկեղեցի, հազարավոր տներ, քոչք ու սարեք

---

<sup>1</sup> Արիստակես Լաստիվերցի. Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, Երևան, 1971, էջ 98:

<sup>2</sup> Խ. Աբովյան. Վերք Հայաստանի, Ողբ հայրենասերի, Պատմական վեպ բաժանեալ յերիս մասունս, Երևան, 2004, էջ 141:

դիմացի սարերին ամաչացնում, վախացնում էին, ուր, ըստ ասության ռամկին, այնքան էր հարստություն և ճոխություն, մինչև մեկ հովիվ տեսնելով մեկ զատկի, թե կնիկը եկեղեցումը տեղ չէր ճարել, էս պատճառով մեկ ահագին տաճար շինեց ու մեկ անսիրտ վանքականի խաթեր Աստված Հայոց վերջին կենաց ճրագը փչեց, թագավորաց թախտը կործանեց...»<sup>3</sup>:

Հիացած Աղասու և նրա ընկերների ազգային-ազատագրական պայքարի դրվագներով՝ Աբովյանը ցավով է դիմում Անիի անցած թագավորներին, որոնք ժամանակին չպահեցին ու չպահպանեցին Մեծ Հայքի այդ հրաշք քաղաքը, Հայաստանի անկախությունը, և հետագա հայ սերունդները երկար դարերով տառապեցին օտարի լծի տակ. «Թագավորք Հայոց, որ Անու միջումը անուշ քնած, ձեր որդիքը հարամու ձեռին, դուք մեկ գլուխ չի՛ բարձրացրիք, որ նրանց հավատին հասնիք, էն որդիքը, որ մեկ սհաթից առաջ աշխարհք զարմացրին իրանց քաջությամբը, երկիրը սասանացրին իրանց տղամարդությամբը ու ինչպես դուք՝ հսկայաբար պահպանեցին իրանց աշխարհը, ձեր հողը, ձեր հայրենիքը, ու դուք՝ անգութ, թողիք նրանց էսպես փորձանքի միջում, թշնամու թրի առաջին»<sup>4</sup>:

Հրաշալի իմանալով հայ ժողովրդի պատմությունը, ծանոթ լինելով հույն, լատին և այլ պատմիչների Հայաստանի մասին թողած տեղեկություններին՝ Աբովյանի սրտի ու մտքի մեջ Անի մայրաքաղաքն ունեցել է մի առանձնահատուկ տեղ: Անի առաջին անգամ այցի է գնացել 1837-ին՝ Հայաստան եկած բարոն և սենատոր Հանի ու նրա տիկնոջ հետ, որոնք հնությունների ջերմ երկրպագուներ էին: Գարնանը՝ մի օր լուսաբացին, նրանք Անին տեսան հեռվից, «երբ նա պարուրված էր կախարդական մշուշով, որպես խորհրդավոր մի ուրվական»<sup>5</sup>:

Երկրորդ անգամ Աբովյանն Անի է մեկնել մի մեծ խմբի կազմում՝ Երևանի գավառապետ Նիկիֆոր Բլավատսկու հրավերով 1847-ի հոկտեմբերի 21-ին, առավոտյան ժամը 8-ին: Ուղևորությունը տևել է մի քանի օր: Նրանց խմբում է եղել նաև Էջմիածնի Մայր աթոռի արքեպիսկոպոս Հովհաննես Շահխաթունի<sup>6</sup>: Այդ ճամփորդության ժամանակ Աբովյանը տարբերվել է խմբի մյուս անդամներից, որոնք առավել արտոնյալ վիճակում էին. «Յուրաքանչյուրն ուներ իր մարդիկը և ուղեկցորդները. միայն էս՝ խղճուկս, ճանապարհորդում էի ուրիշի հաշվին և ուրիշի ձեռքով, որ ինձ զիջել էր գավառամասի պետը պարոն Ֆոն Վ.-ն»<sup>7</sup>:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 195:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 198:

<sup>5</sup> Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, Երևան, 1956, էջ 170:

<sup>6</sup> Հովհաննես Շահխաթունի (1799–1849) – պատմաբան, հնագետ և հմուտ մատենագետ: Նա Մայր աթոռի տպարանի ու մատենադարանի վարիչն էր: Հ. Շահխաթունին է Էջմիածնի ձեռագրատանը գտել Ղազար Փարպեցու «Թուղթը» և ուղարկել Մկրտիչ Էմինին: Գազմել է Էջմիածնի մատենադարանի ձեռագրացուցակը, որը նրանից ստացել, ֆրանսերեն և ռուսերեն հրատարակել է անվանի հայագետ Մարի Բրոսսե (տե՛ս М. Броссе. Каталог книгм Эчмядзинской библиотеки. СПб., 1840; М. Броссет. Catalogue de la bibliothéque d' Edchmiadzin. SPb, 1840): Հ. Շահխաթունին իր գործունեությամբ որոշակի նպաստ է բերել օտարալեզու հայագիտության զարգացմանը:

<sup>7</sup> Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 194:

*Խ. Աբովյանի «Ուղևորություն դեպի Անիի ավերակները (Ճամփորդական խորհրդածություններ)» երկը բաղկացած է 9 հատվածից, որոնցից վերջին երկուսն են անմիջականորեն կապվում Անիի հետ: Այդ հատվածներն են՝*

- ա) Հատված 1 ( անխորագիր),*
- բ) Հատված 2 ( Հիշողություններ Էջմիածնի վանքի մասին),*
- գ) Հատված 3 ( Պատանեկության տարիների հուշեր),*
- դ) Հատված 4 ( Ճանապարհը Էջմիածնի միջով դեպի Սարդարաբադի ջրանցքը),*
- ե) Հատված 5 ( Սարդարաբադի ջրանցքը),*
- զ) Հատված 6 ( Երեկոն Արաքսի հովտում, Արփաչայի ավերքը),*
- է) Հատված 7 ( Արփաչայը և երեկոն նրա հովտում),*
- ը) Հատված 8 ( Անիի ճանապարհը),*
- թ) Հատված 9 ( Մուտքը Անի և այնտեղ գտնվող առարկաները):*

*Անի մայրաքաղաքի կորուստը, վաղեմի փառքի վերացումը յուրօրինակ հիմք են դարձել Խ. Աբովյանի համար խոսելու հայ ազգի ճակատագրի, իր անձնական կյանքի դժվարությունների ու ավերումների մասին: Այս խորհրդածություններն ունեն ճանաչողական մեծ արժեք, իսկ որոշ եզրահանգումներ ապշեցնում են իրենց մարգարեական իմաստությամբ: Մեծ լուսավորիչը հայ ժողովրդի ճակատագիրը շաղկապված է տեսնում Կովկասի այլ ժողովուրդների հետ: Լինելով մեծ մարդասեր, միաժամանակ երդվյալ հայրենասեր, նա զգում էր, որ իր ժողովրդին բախտ է վիճակվել ապրելու երկրագնդի մի այնպիսի հատվածում, ուր ապրում են շատ ազգեր, տարբեր կրոններով, տարբեր շահերով, ու թեպետ այդ ազգերը միասին մտել են ռուսական կայսրության կազմի մեջ, սակայն յուրաքանչյուրն ունի իր ազգային խնդիրներն ու շահերը, որոնք միատեղելը չափազանց դժվար է. «Մեր Անդրկովկասը, որպես աշխարհի սկզբից մինչև մեր ժամանակները եղած և այժմ էլ գոյություն ունեցող բոլոր ժողովուրդների հավաքատեղի, որը մինչև ռուսական տիրապետությունը չուներ ո՛չ ընդհանուր կրոն, ո՛չ ընդհանուր քաղաքականություն, հետևաբար և՛ ո՛չ ընդհանուր շահ, դեռևս երկար ժամանակ կմնա իբրև ամենադժվար, ամենախորամախ առեղծվածը՝ նույնիսկ ամենախելացի և ամենափորձառու քաղաքագետի համար» (ընդգծումը մերն է. – Ա. Դ.)<sup>8</sup>:*

*Անի տանող ճանապարհի տարբեր կետերի մասին գրելիս Աբովյանը շարունակ վերհիշում է իր կյանքի տարբեր դրվագներ՝ կրթությունը Էջմիածնի ճեմարանում, պրոֆեսոր Պարրոտի հետ Արարատի գազաթը բարձրանալը, դորպատյան տարիները, մանկավարժական գործունեությունը Թիֆլիսում ու Երևանում, բանագիտական, գրական, գիտական, մանկավարժական աշխատությունները, շփումները տարբեր ազգերի պատկանող գրողների, գիտնականների, ճանապարհորդների, քաղաքական գործիչների, հոգևորականների հետ: Այդ ֆոնի վրա նա պատկերում է, թե ինչն է հայկական կենցաղում կատարյալ, մեր ժողովրդի որ ավանդույթն է, որ ուսանելի է այլ ժողովուրդների համար. «Ես որ իմ ծնված օրից չգիտեմ և չեմ տեսել գինեգործության մի այլ ձև, քան գինի ստանա-*

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 182:

լու մեր պապենական, ասիական ձևը, ոչ պակաս հաջողությամբ այնպիսի գինի ստացա, որ 1843 թ. Թիֆլիսից ինձ մոտ եկած հույժ կրթված երկու եվրոպացիների՝ պարոնայք Ռոզենին և Բոդենշտեդին զարմանք պատճառեց»<sup>9</sup>:

Ողջ ուղեգրության ընթացքում հիշատակվում են Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առանձին դրվագներ, որոնք մեծ գրողը բաղդատում է գիտական այլ աղբյուրների հետ: Նա նկարագրում է Անի տանող ճանապարհին ընկած բնակավայրերը, աշխարհագրական տարածքները և դրանց կցում իր ժամանակի բացատրությունները: Կողք գյուղի մասին խոսելիս նշում Կողբի աղի մաքրությունն ու համը, խոսում դրանից ստացվող եկամտի մասին՝ անվանելով այդ աղը «ոսկյա գեղմ»<sup>10</sup>: Հիշատակում է, թե Կողբում է գտնվում հայերեն Աստվածաշնչի թարգմանիչներից ու Մովսես Խորենացու գաղափարակից Եզնիկ Կողբացու գերեզմանը, որն ուխտատեղի է, ու ժողովուրդը շարունակ այցելում է այդ վայրը՝ «իր հարգանքն արտահայտելու մեծ հանճարին»<sup>11</sup>:

Խ. Աբովյանը եղել է մեր բանագիտության սկզբնավորողներից ու որպես բանահավաք՝ շնորհակալ գործ է կատարել: Տեսանելի ձևով ներկայացնում է, թե որքան դժվարին ու անշնորհակալ է բանահավաքի գործը: Նրան պատվիրված էր հատուկ ուսումնասիրություն գրել Հայաստանի տարածքում ապրող եզդիների ու քրդերի վերաբերյալ: Պատվիրատուն եղել է կոմս Բեկենդորֆը: Ինչպես Գարեգին Մրվանձտյանցը «Մասնա ծոեր» էպոսը գրառելիս բավականին ջանքեր է թափել, որպեսզի առնիստցի Կրպոյից լսի ու գրառի նրա իմացած պատումը<sup>12</sup>, այնպես էլ Աբովյանը մեծ զոհողությունների գնով է կարողացել եզդիներից ու քրդերից արժեքավոր տեղեկություններ քաղել նրանց կենցաղավարության, հավատալիքների, անգամ պոեզիայի մասին. «Հենց Քրիստոսի ծննդյան տոներին՝ ամենադաժան ձմռանը, իմ հաշվին ես ուղևորություն ձեռնարկեցի դեպի քրդերն ու եզդիները՝ պատմության այդ ֆենոմենները, երկու շաբաթ ապրեցի նրանց մեջ, ծերերին և կանանց թանկարժեք նվերներ բաժանեցի, որպեսզի գրավեմ նրանց վստահությունը, և այդպիսով, նրանց հրապուրելով, ավելի հարմար և հաստատ կերպով, ամեն ինչի մեջ կասկածամիտ այդ վայրենիներից իմանամ բոլոր արժեքավոր տեղեկությունները նրանց բարքերի, սովորությունների, հավատալիքների, բնավորության և նույնիսկ պոեզիայի մասին»<sup>13</sup>:

Իր խորհրդածություններում Աբովյանը բավականին մանրամասն խոսում է այն երեք դասագրքերի մասին, որոնք մեծ հմտությամբ, մանկավարժական նոր մեթոդներով պատրաստել է հայ մանուկների համար՝ դրանք գիտակցված ձևով շարադրելով աշխարհաբարով: Սակայն այդ դասագրքերը «փտում են փոշու մեջ», ավելին, դրանք դիտվում են որպես հակակառավարական դրսևորումներ, որովհետև ցարական կառավարությունն իր կայսրության մեջ ապրող ժողովուրդներին կամենում է հեռացնել սեփական ազգային լեզվից ու արմատներից,

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 193:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Գ. Աբովյանի մասին, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 85:

<sup>13</sup> Խ. Աբովյանի մասին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, էջ 194-195:

մինչդեռ այդ դասագրքերը հակառակ առաքելությունն ունեն. «Այդ խորհրդի անդամներից մեկը՝ ավագ ուսուցիչ Ֆիլադելֆինը դեռ համարձակվեց արտահայտվել ահա թե ինչպես. «Կառավարությունը ցանկանում է ոչնչացնել տեղական լեզուները, իսկ դուք ուզում եք դրանց կրկին կենդանացնել ու ամրապնդել»:

Անիի ուղևորության խորհրդածություններում ևս մեկ անգամ երևում է, թե որքան քաջատեղյակ էր Աբովյանը հայ ժողովրդի պատմական անցյալին. կարդացել է հայ մատենագիրների երկերը, այլ լեզուների քաջիմացության շնորհիվ՝ անտիկ աշխարհի ու եվրոպայի մատենագիրներ Ստրաբոնի, Պտղոմեոսի, Շիկոսի, Վելլետուսի, Ամիանուսի, Տլորի աշխատությունները, որոնցում հիշատակություններ կան հայերի մասին: Նույն կերպ նա կարևոր տեղեկություններ ունի հայ Բագրատունիների մասին թե՛ հայկական և թե՛ օտար աղբյուրներից:

Լինելով լայնախոհ մտածող՝ Աբովյանը Անի ընթանալու ճանապարհին տեսնում է նաև ռուսական տիրապետության տակ Հայաստանի արևելյան հատվածի կյանքում տեղի ունեցած դրական փոփոխությունները, որոնց պերճախոս վկայությունն են Սարդարապատի ջրանցքն ու Էջմիածնի Մայր աթոռի բարեփոխված վիճակը: Սարդարապատի ջրանցքը Աբովյանին ներշնչում է, թե մի օր Հայաստանը վերածնվելու է, և հայն ապրելու է արժանապատիվ ու բարեկեցիկ:

Աբովյանի կատարելատիպերից մեկը եղել է Մխիթար Սեբաստացին՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիրը, որն իր դպրոցում աստվածաբանությանը զուգակցեց բնական ու ճշգրիտ գիտությունների ուսուցումը: Աբովյանի երազանքն այն է, որ ինքն էլ Հայաստանում ունենա մի համեստ դպրոց, ուր քրիստոնեական աստվածաբանության կողքին աշակերտները սովորեն աշխարհագրություն, պատմություն, քիմիա, ֆիզիկա, բնապատմություն, հին լեզուներ: Սա նաև Ֆրիդրիխ Պարրոտի խորհուրդն էր<sup>14</sup>:

Բացառիկ կարևոր են նաև այն գնահատականները, որոնք մեծ լուսավորիչը տալիս է Էջմիածնին, որը հրաշքի նման փրկեց ու պահպանեց հայերին, միշտ խնամք տարավ քրիստոնեական հոգատարությամբ իր զավակների նկատմամբ, մինչդեռ «Հռոմը, հենց միայն իշխանասիրության, սուտ հնարանքների և ամբարտավանության պատճառով իր հավատարիմ որդիներին միլիոններով կորցրեց»<sup>15</sup>:

Այս խոհերի սկզբնապատճառն Անին է, որովհետև «Խոսել Անիի մասին, նշանակում է շոշափել Հայաստանի պատմության ամենանրբին տեղը»<sup>16</sup>: Աբովյանը Անին համեմատում է հին աշխարհի այնպիսի նշանավոր քաղաքների հետ, ինչպիսիք են՝ Պալմիրը, Բաբելոնը, Կարթագենը, Հռոմը<sup>17</sup>: Թեպետև արևելյան պատմիչների պատմածը Անի քաղաքի շինության ու բազմամարդության մասին կարող է կասկածելի թվալ XIX դ. համար, սակայն քաղաքի ավերակները խոսուն ձևով ներկայացնում են նրա պերճաշուք եկեղեցիների, կամուրջների, ամ-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 174:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 166:

<sup>17</sup> Նույն տեղում:

րոցների ու պարիսպների «հանճարեղությամբ ու փարթամությամբ» կառուցված լինելու փաստը:

Աբովյանը պատմում է Անիի գետնուղու մասին, որը, ինչպես ժողովրդական ավանդությունն ու պատմիչներն են ասում, եղել է երկրորդ եգիպտական լաբիրինթոս. «...իր մեծությամբ և շքեղությամբ անհամեմատ գերազանց է նրանից, ուր մտնողը, առանձնահատուկ դյուրանքի ենթարկվելով, իր առջև տեսնում է շքեղությամբ ու գանձերով շքեցուցիչ բոլորովին նոր մի աշխարհ»<sup>18</sup>: Այդ գետնուղում եղել է խանութների մի ամբողջ շարք, որոնք լի են եղել ընտիր կտորներով, թանկագին քարերով, ոսկով ու արծաթով:

Անիի շքեղությունները համեմատվում են Շեհերազադայի պատմած «Հազար ու մի գիշերների» հեքիաթների հետ: Իհարկե, Աբովյանը Անիի հետ կապված չափազանցությունները կապում է արևելյան ժողովուրդներին հատուկ չափազանցնելու սովորության հետ, սակայն այդ ամենի հիմքը իրական, պատմականն է, այսինքն՝ այն, որ շատ կարճ ժամանակահատվածում հայ ժողովուրդն իր հանճարի շնորհիվ հասել է այնպիսի փառքի, շքեղության, հզորության ու մեծության, որ Անին արժանացել է նման գրույցների:

Ճամփորդական մտորումների 9-րդ հատվածում՝ «Մուտքը Անի և այնտեղ գտնվող առարկաները» խորագրի տակ, Աբովյանը չի հաղորդում առանձին մանրամասներ Անիի կարևոր կառույցների մասին, թվարկում է մի քանի եկեղեցի և հիշատակում եռաշերտ կամուրջը, որի նախագիծն ու իրագործումը խմբի հետ Անի այցելած Չերնյավսկուն թվում է ուղղակի հրաշք: Անին տեսնելուց հետո Աբովյանը կատարում է մի հետաքրքիր ընդհանրացում. «Դա ստեղծագործությունն է մի ժողովրդի, որ չի եղել հռոմեացիների նման նվաճող, մոնղոլների ու պարսիկների նման՝ բազմաքանակ, հնդիկների, չինացիների և հույների նման՝ առատաձեռն բնությունից և հազարամյա հանգստավետ կյանքով փայփայված ու երկրի հարստությամբ ողողված և ոչ էլ ուրիշների արյամբ և գանձերով է հարստություն ձեռք բերել. դա ստեղծագործությունն է՝ իր սեփական ջանքով ու աշխատանքով փառքի ու մեծության այդ աստիճանին հասած, խաղաղ, գործունյա, բայց դաժան բախտի բերումով մեծ ու անթիվ բոլոր նվաճողների խաչուղիների վրա ընկած մի ժողովրդի,– ի նկատի ունեցեք այս բոլորը, և դուք կարող եք ինձ հետ լիովին բաժանել իմ և՛ օրինական խանդավառությունը, և՛ արդարացի վիշտը, որպիսի զգացմունքներ իսկական քրիստոնեական, իսկական մարդկային հոգում չեն կարող առաջ բերել ո՛չ Հռոմը, ո՛չ Բյուզանդիոնը, ո՛չ Եգիպտոսը և ո՛չ էլ Բաբելոնը»<sup>19</sup>:

XIX դ. եվրոպացի, ռուս բազմաթիվ հետազոտողներ են այցելել Անի ու գրել այդ քաղաքի մասին, սակայն Անիին նվիրված իրենց հետազոտություններով Խ. Աբովյանի անմիջական ժամանակակիցները երկուսն են՝ Հ. Աբիխը և Մ. Բրոսսեն:

Հերման Վիլհելմ Աբիխը (1806–1886) գերմանացի երկրաբան է: Նա հետազոտել է Իտալիայի հրաբուխները, վարել է Դորպատի համալսարանի միներոլո-

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 203:

<sup>19</sup> Նույն տեղում:

գիայի ամբիոնը: 1844-ին եկել է Հայաստան, այցելել Անի և կազմել քաղաքի զծագիրը: Գրել է «Անի» վերնագրով ծավալուն հոդված, որը գերմաներենից թարգմանվել է ռուսերեն<sup>20</sup>: Հ. Աբիխի հոդվածի համար շատ հմուտ ծանոթագրություններ է գրել նշանավոր հայագետ Մկրտիչ Էմինը: Նրա ծանոթագրությունների վերջում դրված են՝ Խ. Յ. գլխատառերը: Նախնական պայմանավորվածության համաձայն, գերմանացի երկրաբանը Անի պետք է մեկնե՛ր Խ. Աբովյանի ուղեցույցով, սակայն ինչ-ինչ տարաձայնությունների հետևանքով մեկնել է առանց նրա: Այդ մասին Նիկողայոս Ադոնցը գրում է. «Անտարակույս է, որ գերմանացին հայտնի երկրաբան Հ. Աբիխն է, որ հիրավի փորձել է բարձրանալ Մասիս՝ ընկերակցությամբ Աբովյանի և այս առթիվ գծություն է ծագել նրանց մեջ»<sup>21</sup>: Իսկ Ֆրիդրիխ Բոդենշտեդը (1819–1892), որը գերմանացի նշանավոր բանաստեղծ և ճանապարհորդ էր, այդ գծության մանրամասները բացատրել է այսպես. «Աբիխի գոռոզ վերաբերմունքն Աբովյանի հանդեպ, որ ցուցաբերելու իրավունք էր համարել նա այն պատճառով, որ ռուսական պաշտոնետության սանդուղքի վրա մի երկու աստիճանով բարձր էր Աբովյանից, առիթ է տվել թյուրիմացությունների: Վերջիններիս հետևանքը եղել է այն, որ խեղճ հայը հուսահատության ծայրն է հասել: Աբովյանը հետո ուղարկել էր իր օրագրերն այն ժամանակից և խնդրել, որ ես հրատարակեմ «Հավելումներ և լուսաբանումներ պրոֆ. Աբիխի՝ Արարատ սարը բարձրանալու մասին» վերնագրով: Բոլորովին բարյացակամ մտքով ես չկատարեցի այդ խնդիրը: ... Այնպես որ այդ օրագրերը մինչև այժմ էլ իմ ձեռքին են, որովհետև հարմար առիթ չներկայացավ Երևան ուղարկելու»<sup>22</sup>:

Հ. Աբիխը նկարագրում է Անի քաղաքի՝ իր վրա թողած ցնցող տպավորությունը: Այդ տպավորության տակ նա ընկնում է հենց առաջին հայացքից. «Հաջորդ օրը՝ կեսօրին, մենք հասանք հրաշալի Անի քաղաքը, որի ավերակներն աննկարագրելի գերեցին ինձ և 4 օր ես նվիրեցի նրանց ուսումնասիրությանը»<sup>23</sup>: Աբիխը նշում է, թե հայերը պատկանում են աշխարհի հին քաղաքակրթությանը, և այդ առումով նրանք Արևելքի պատմության մեջ նշանավոր երևույթ են: Նա պատմական ակնարկով հպանցիկ նշում է հայերի անցած դժվարին, մաքառումներով լի պատմական ուղին, հիշատակում Մխիթար Սեբաստացու կողմից 1717 թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում միաբանության հիմնումը, որի լույսի ճառագայթներն արագորեն սփռվեցին աշխարհով մեկ, բոլոր այն երկրներում, ուր ապրում էին հայ ժողովրդի զավակները: Գերմանացի գիտնականը նշում է Անիի թագավորանիստ մայրաքաղաք լինելը: Քաղաքն ունեցել է հազար տուն ու հարյուր եկեղեցի, այն հզոր էր և ծաղկուն<sup>24</sup>: Պատմում է Բագրատունիների ծագման

<sup>20</sup> Հոդվածի առանձնատիպը գտնվում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում: Այն Էջմիածնի Մայր պթոռի մատենադարանում ստացվել է 1903-ին, պատկանել է Քերովբե Պատկանյանին (տե՛ս «Ани». Статья академика Г. В. Абиха (Пер. с нем. Протокол, с. 97). Тифлис, декабрь, 1845, с. 271–296):

<sup>21</sup> Ն. Ա. Պ. Ն. և Գ. Երկեր հինգ հատորով, Բ, Երևան, 2006, էջ 534:

<sup>22</sup> Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, կազմեց և ներածականները գրեց Հրայր Մուրադյանը, Երևան, 1941, էջ 27–28:

<sup>23</sup> Г. А. Б. и х. Նշվ. հոդվ., էջ 271:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 272:

մասին՝ ըստ Մ. Խորենացու: Հայ Բագրատունիների ժամանակ՝ 961-ին, Անի է տեղափոխվում Բագրատունիների թագավորական նստավայրը. «Գուցե այդ առաջին մեծության աստղը այն ժամանակվա Հայաստանի քաղաքների մեջ փայլում էր շատ պայծառ Բարբարոսության այդ գիշերին»<sup>25</sup>: Նա իրավացիորեն նկատում է, թե ինչպես ամեն երկրի, այնպես էլ Հայաստանի ճակատագիրը սերտորեն կապված էր նրա մայրաքաղաքի ճակատագրին: Որպես երկրաբան՝ նա հանքաբանական, տեղագրական փաստեր է բերում Անիի և նրա շրջակա լեռների մասին, որոնցից մեկն Արագածն էր:

Հ. Աբխիսը հեռվից երևացող Անիի ավերակները համեմատում է հին Հռոմի ավերակների հետ<sup>26</sup>: Նա հիշատակում է իրենից առաջ Անի այցելած ճանապարհորդներին՝ Կեր Պոտերին, Համիլտոնին, Կոխին: Նկարագրում է Անիի վանքերը, շինությունների տուֆ քարը համարում է շինարարության համար հիանալի քար. թեթև է, հեշտ է ենթարկվում մշակման, իր բաղադրությամբ դիմացկուն է և դիմանում է օդի փոփոխություններին: Տուֆը սև է, կեղտադեղնագույն կարմիր հատիկային կետերով կամ մուգ կարմիր: Ահա այդ գունային տարբերությունները հայ վարպետներն օգտագործել են բարձր ճաշակով՝ ստեղծելով նաև մոզաիկ պատեր: Հ. Աբխիսն հիացմունք են պատճառել Անիի պարիսպները՝ իրենց սրբատաշ գեղեցիկ ու հզոր պատերով: Գիտնականը իր հետ Թիֆլիս է տարել Անիի արձանագրություն ունեցող քարե սալիկներից մեկը, որը հետագայում հանձնվել է Մ. Պետերբուրգի Արևելյան թանգարանին: Այդ արձանագրության թարգմանությունը կա Մ. Բրոսսեի, «Les Ruines d'Ani» աշխատության առաջին հատորում<sup>27</sup>:

Հ. Աբխիսն էլ հետաքրքիր խոհեր ունի՝ կապված կյանքի վաղանցիկության, փառքի ու շքեղության ժամանակավոր լինելու հետ: Նա համեմատում է հին Հռոմն ու Անին. երկուսն էլ եղել են փառահեղ, սակայն Հռոմի ավերակները մարդու սիրտը չեն տանջում մահվան դաժանության մտածումներով, մինչդեռ Անին թվում է մի վաղամեռիկ ժողովրդի գերեզման, մի ժողովրդի, որը դաժանորեն հետապնդվել է ճակատագրից: Նա շեշտել է, որ Անիի ամրոցի պատերը և չափերով, և՛ իրենց ամրությամբ ոչնչով չեն զիջում հին Հռոմի նույն շինություններին: Նա հիացմունքով է խոսում թագավորական պալատի ավերակների մասին, որի ճարտարապետական լուծումները զարմացնում են իրենց կատարելությամբ<sup>28</sup>: Աբխիսը նկարագրում է Անիի կլոր եկեղեցիները, որոնք իրենց ներսում նախազարդ են և ունեն նրմանակարներ: Խոսում է բավականին լավ պահպանված մզկիթի մասին, որ բարձրանում է հայկական եկեղեցու վրա: Նրան ամենից ավելի հիացմունք է պատճառել Անիի Մայր տաճարը: 980-ին այն սկսել է կառուցել Սմբատ Երկրորդ թագավորը, իսկ 993-ին ավարտել է Գագիկ Առաջինը: Հ. Աբխիսի կարծիքով Անիի Մայր տաճարը խիստ ու վսեմ իր գեղեցկությամբ ապ-

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 273:

<sup>26</sup> 2008-ի ամռանը մենք եղել ենք Անիում և խոստովանենք, որ Հ. Աբխիսի տպավորությունները շատ ճշգրիտ են:

<sup>27</sup> Г. А. Броссе. Уշվ. հոդվ., էջ 280:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 282:

շեցնում է բոլոր նրանց, ովքեր ոտք են դնում ներս, որովհետև թվում է, թե իր վրա ունի այն իսկական արվեստի դրոշմը, որը ներկայացնում է մարդու մեջ եղած աստվածային ոգին: Իր արվեստով այն գերազանցում է սովորովի կանոններն ու ոճերը: Դա միակերպ մի ոճ է, որ պատկանում է այն բոլոր ժամանակներին, երբ քրիստոնեական արվեստը ձգտել է իրեն դրսևորել: Հողվածում բերվում են մի շարք շինությունների ներսում կատարված նկարներ, որոնց թվում են Անիի Մայր տաճարը և Տասներկու անկյուն ունեցող եկեղեցին: Գիտնականին հիացրել է նաև Մայր տաճարի գմբեթը. «Այն տեղում, ուր միանում են խաչի ճյուղերը, բարձրանում է հոյակապ գմբեթը՝ որպես մեծագույն մտքի դրսևորում»<sup>29</sup>: Անիի ճարտարապետությունը Հ. Աբիխին հիացրել է իր պարզ վսեմությամբ, որը պերճախոս վկայում է, թե եղել է քրիստոնեական մի հոգևոր պետություն, որն անցյալում ծաղկուն վիճակ է ունեցել:

Հ. Աբիխն այնքան է տպավորված Անիի Մայր տաճարի հոյակապությամբ ու հավատացյալի վրա ունեցող ներգործուն ուժով, որ իր հոդվածի 288–289-րդ էջերի տողատակում հայտնում է, թե բոլորովին վերջերս Ալեքսանդրապոլի համայնքը սեփական միջոցներով քաղաքում կառուցել է Անիի Մայր տաճարի կրկնօրինակը. «Այդ տաճարն իր նմանը չունի ողջ Անդրկովկասում, այն զարդարում է քաղաքը որպես ազգային զգացմունքի ու կրոնական միասնության մի հուշարձան՝ սփռվելով դիտողին»<sup>30</sup>:

Գերմանացի գիտնականը մանրամասն խոսել է նաև Տիգրան Հոնենցի պատվերով կառուցված հրաշակերտ եկեղեցու մասին, որի որմնանկարները շատ-շատ են: Դրանք ներկայացնում են աստվածաշնչային դեմքերին, նաև հայ եկեղեցու սրբերին: Նա մեծ նմանություն է տեսնում այդ որմնանկարների ու Ֆլորենցիայի եկեղեցիների որմնանկարների արվեստի մեջ: Համոզված է, թե արվեստագետները պետք է պարզեն՝ որտեղից է գալիս այդ նմանությունը: Հ. Աբիխը ցավով է խոսում, որ մահմեդական բարբարոսները փորձել են ջնջել այդ բազմաքանակ որմնանկարները, սակայն դժվարանալով, բավարարվել են Փրկչի և Սուրբ Աստվածածնի դեմքերը ջնջելով ու «չնայած գմբեթի բավական բարձրությանը, չի փրկվել նաև Աստվածածնի գլուխը»<sup>31</sup>:

Խ. Աբովյանի ժամանակակից հաջորդ գիտնականը, որ գրել է Անիի մասին, ֆրանսիացի նշանավոր հայագետ, վրացագետ Մարի Բրոսսեն (1802–1880) է: 1847–1848 թվականներին նա իրականացնում է իր տարիների երազանքը՝ այցելում է Անդրկովկաս, մի քանի ամսով լինում Վրաստանում ու Հայաստանում: 1847-ի հունվարի 11-ին Թիֆլիսից մեկնում է Երևան: Այդ ճամփորդությունը մանրամասն նկարագրել է իր նոթերում, որոնք լույս են տեսել 1849-ին Ս. Պետերբուրգում<sup>32</sup>:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 292:

<sup>32</sup> M. B r o s s e t. Rapports sur un voyage Archéologique dans la Géorgie et dans l'Arménie (exécute en 1847-1848 ) St. Pétersbourg, 1849, p. 15-152.

Հայաստանում Բրոսսեն կամենում էր այցելել ոչ միայն Էջմիածին, այլև Գեղարդ, Խոր Վիրապ, Անի, սակայն խստաշունչ ձևերը խանգարում է նրա ծրագրերի իրականացումը: Եվ նա լինում է Երևանում, Էջմիածնում, մի քանի գյուղերում, որոնցով անցնում էր Երևան-Թիֆլիս ճանապարհը՝ Ֆանտանկա, Ախտա, Ռնդամալ, Չիբուխլու, Դիլիջան և այլն:

Մ. Բրոսսեն Հայաստանում ապրել է 40 օրվա ստեղծագործ կյանքի երջանիկ պահեր: Հայաստան այցելելուն նվիրված գրքի երրորդ մասը՝ «Troisième rapport», ունի «Էջմիածին-Անի» խորագիրը: Սակայն Անիին նվիրված տեղեկությունները Մ. Բրոսսեն քաղել է նախորդ ճանապարհորդների հուշերից ու տպավորություններից: 1860 և 1861 թվականներին լույս են տեսնում գիտնականի Անի մայրաքաղաքին նվիրված երկու հատորները՝ «Անիի ավերակները» («Les Ruines d'Ani») վերնագրով: Նախքան այս գրքերը հրատարակելը՝ ճամփորդական իր գեկույցներին նա կցել էր Ն. Խանիկովի «Էքսկուրսիա դեպի Անի» հուշագրությունը, որը պատմում էր 1848-ին վերջինիս Անի կատարած այցելության մասին: Ն. Խանիկովը խոստովանում է, որ Անին բոլորովին էլ «terra incognita» (անհայտ, անծանոթ երկիր) չէր, որովհետև մինչ իր այցելությունը բավական թվով եվրոպացի ճանապարհորդներ եղել են Անիում և թողել իրենց տպավորությունները: Ճանապարհորդ Սիր Կեր Պորտերը Անին անվանել է հինավուրց ու շողշողուն քաղաք, որի բոլոր շենքերի վրա կա սուրբ խաչի պատկերը, և քաղաքի շենքերն ունեն բազմաթիվ հայկական արձանագրություններ՝ քանդակված մեծ մասամբ եկեղեցիների դռների վերևում: Խանիկովի հուշերի մեջ եղած Անիի հայերեն ու վրացերեն արձանագրությունները ֆրանսերեն է թարգմանել հենց ինքը՝ Բրոսսեն:

Իր «Անիի ավերակները»<sup>33</sup> հետազոտության առաջին հատորում Բրոսսեն անդրադարձել է Անի այցելած ճանապարհորդներ Աբիխի, Թեքսիեի, Բուչուգինի, Խուդաբաշևի, Կաստների, Բորեի, հայր Ներսես Սարգսյանի կարծիքներին: Նա առանձին մասերով ներկայացնում է Կաստների այլբոմը ու տալիս իր բացատրությունները: Մ. Բրոսսեն մեծապես օգտվել է նաև հայր Ջալալյանի և Շահ-խաթունու ճամփորդական նկարագրություններից ու հուշերից: Անին ֆրանսիացի նշանավոր գիտնականին հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս բացահայտելու հայ ժողովրդի անցյալի մասին ունեցած իր խոր ու բազմակողմանի գիտելիքները:

«Անիի ավերակները» գրքի և՛ առաջին, և՛ երկրորդ հատորի մեջ կան առանձին վանքերի ու շինությունների մանրամասն նկարագրություններ: Գրքի առաջին հատորում կան քաղաքի շինությունների վրա եղած արձանագրությունների ֆրանսերեն թարգմանությունները: Տարբեր բաժիններով ներկայացվում է Անիի՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ ու վերջին գրավումը: Գիրքը գրված է պատմական փաստահարուստ հենքի վրա. գիտնականը կամենում է բացատրել, թե ինչո՞ւ այդ հարուստ ու պերճաշուք քաղաքը կործանվեց, ի՞նչն էր դրա պատճառը, ովքե՞ր էին մեղավորները: Ըստ այդմ, նա

<sup>33</sup> M. B r o s s e t. Les Ruines d'Ani, capitale de rois Bagratides, aux 10 et 11 s., histoire et description, 1 partie, St. Pétersbourg, 1860, 2 partie, St. Pétersbourg, 1861.

վերապատմում է Բագրատունի թագավորության կարևոր դրվագները, քաղաքական բարդ հարաբերությունների խառնարանի տեսադաշտի վրա բնութագրում հայ թագավորներին, իշխանական դասին: Երբեմն հայագետի պատումը վերածվում է վսեմ գեղարվեստականի, երբ նկարագրում է Բագրատունի հայ թագավորների հերոսական, հայրենասիրական սխրագործությունները: Այս աշխատության մեջ Բրոսսեն մի քանի անգամ կրկնում է, թե միաբանությունն ու համաձայնությունը, որ պատգամում էր Եղիշեն, միշտ էլ հայրենասիրությանը միացած երկրի համար տալիս են իրենց ցանկալի արդյունքը: Իսկ հայ իշխաններն այդ պատգամը մոռացել էին: Քարե ամրոցները դառնում են անգոր, իշխանները մեկը մյուսի հետևից ընկնում են թշնամու ոտքը, ողջ գեղեցկությունն անհետանում է: Բրոսսեն վերստին հիշեցնում է Եղիշեի այն միտքը, թե անհաստատ համաձայնության դեպքում երկնքից եկող ուժն էլ է հեռանում:

Հայագետը Անիի վերջնական անկման մասին հատվածը խորագրել է՝ «Անիի վերջին աղետը»<sup>34</sup>: Մինչ այդ նա նկարագրում է թաթարների արշավանքը դեպի Անի: Թեպետ այդ ժամանակ գոյություն ուներ Կիլիկիայի հայկական թագավորությունը, սակայն նրա արքան՝ Օշինը, հազիվ էր կարողանում պաշտպանել իր երկիրը: Մ. Բրոսսեն խոսում է 1319 թ. Հայաստանում տեղի ունեցած մի սաստիկ երկրաշարժի մասին, որը ջնջեց երկրի երեսից քաղաքներ, ավերեց մեծաքանակ գյուղեր: Նույն ժամանակ քարուքանդ եղավ հոյաշեն մայրաքաղաք Անին: Այն ինչ եղավ Անիի հետ, ըստ պատմիչ Ղազար Ջահկեցու, Հովհաննես Երզնկացի վարդապետի անեծքի հետևանքն էր:

Բրոսսեն անդրադառնում է նաև Անին լքած բնակիչների հետագա ճակատագրին: Դեռևս Գագիկ Երկրորդի ձեռքակալվելուց և Անին հույներին հանձնելուց հետո շատ բնակիչներ սկսեցին արտագաղթել Հայաստանից, սփռվել հեռավոր երկրներում, որպեսզի չտեսնեն իրենց գեղեցիկ մայրաքաղաքի անկումը: 1060 թ., երբ քաղաքն անցավ օտարների ձեռքը, քաղաքի և նրա շրջակա գյուղերի բնակիչների մի մասը մեկնեց Լեհաստան, Մոլդավիա: 1064-ին, երբ քաղաքն առնվեց պարսիկներից, բնակիչների մի մեծ զանգված ևս հետևեց Լեհաստան ու Մոլդավիա գնացածներին, իսկ 1239-ին՝ վերջին աղետի ժամանակ կենդանի մնացածները մեկնեցին Աստրախան, Միս, Ջուլֆա, Վան, Թեոդոսիա և այլուր: Վերջին աղետի ժամանակ բնակիչները գնացել են նաև Վասպուրական, Պարսկաստան, Համշեն, Տրապիզոն: Մոլդավիա գնացածների մի մասն անցնում է Գալիցիա, Պոդոլսկ և Ռուսաստանի այլ հատվածներ: Հայտնի է, որ դեռևս 1060-ին ռուսական մեծ իշխան Դիմիտրին Անիից գաղթած հայերին տվել է մեծ արտոնություններ: Լեհաստանում Անիի հայերը հիմնում են հզոր գաղթավայր, ստանում արտոնություններ, և անվանի ու հարուստ հայերին լեհական կառավարությունը համարում է առաջին կարգի ազնվականներ: Հայկական գաղթավայրերի մեծ մասում մինչև XIX դ. հայերը շարունակում են պահել իրենց լեզուն և խոսում են հայերեն:

Մ. Բրոսսեն «Անիի ավերակները» գրքի երկրորդ հատորի վերջում դնում է հավելվածներ, որոնք ներկայացնում են լրացուցիչ այն նյութերը (զանազան ար-

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 135:

ձանագրություններ, գրավոր փաստաթղթեր), որոնք իր աշխատանքի ժամանակ ստացել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից:

Մ. Բրոսսեն ստեղծեց Անիի պատմության առաջին մեծ տարբերակը, որով յուրովի ամփոփեց անիագիտության առաջին փուլը, նախապատրաստեց հետագա հայագետների հետազոտական ընթացքը:

Բհարկե, հնագիտության ու պատմագիտության մեջ ցարդ Անիի մեծագույն հետազոտողը հռչակավոր հայագետ Նիկողայոս Մառն է, որը մի քանի տարի պեղել է Հայաստանի մայրաքաղաքն ու իր հնագիտական ուսումնասիրությունները դարձրել հանրության սեփականությունը: Նա տվել է Անի քաղաքի և նրանում ապրող հայերի կյանքի սպառնիչ բնութագիրը. «Անին, համենայնդեպս, կենսաձևով հարազատ ու մոտ էր հին հայկական կենսակերպին՝ իր ազնվական բնույթով ու դասային կանոններով, քան հայ ժողովրդի առավել ուշ շրջանի կենսաձևը, երբ քաղաքական լրիվ անկումը ու մահմեդականների կողմից չընդհատվող կեղեքումները հայերին համահարթեցրին դասային մի պատկանելության»<sup>35</sup>:

Անիի մասին երեք մտավորականները՝ հայ, գերմանացի, ֆրանսիացի, XIX դ. 40-ական թվականներին ասում են նույնը՝ Անին եղել է հայ ժողովրդի կերտած ճարտարապետական հրաշքներից մեկը և ունեցել է դաժան ու դժբախտ ճակատագիր: Խաչատուր Աբովյանն իր ստեղծագործական կյանքի, ազգանվեր գործունեության հետ կապված դժվարությունները համեմատում է Անի մայրաքաղաքի հետ, միայն կա մի մեծ տարբերություն. իր վերջին մեծ գործում հավատում է, որ մի օր իր բոլոր իղձերն իրականություն են դառնալու, և որ նախախնամությունը հետմահու իրեն օգնելով՝ գնահատանքի է արժանացնելու իր անձն ու իր լուսավոր գործը: Ահա այստեղ էլ նա դարձել է իսկական մարգարե:

СТОЛИЦА АНИ В ОЦЕНКАХ Х. АБОВЯНА И ЕГО СОВРЕМЕННИКОВ  
(К 200-летию со дня рождения Х. Абовяна)

АЭЛИТА ДОЛУХАНИЯ

Р е з ю м е

В истории армянского народа столица Ани, бесценная жемчужина царства Багратидов, занимает исключительное место. Столица Ани всегда интересовала многих европейских, русских путешественников, археологов, ученых и арменоведов. В 1847 г. Х. Абовян написал свою последнюю обшир

<sup>35</sup> Н. М а р р. Тексты и разыскания по армяно-грузинской филологии, книга первая. СПб., 1900, с, 199.

ную работу, посвященную столице Ани, которую посетил осенью 1847 г. В ней помимо описания путешествия есть очень ценные размышления об исторической судьбе армянского народа, боль за страдания и потери, вера в светлое будущее, а также переданы личные страдания, связанные с невыносимыми трудностями в деле осуществления своих патриотических, педагогических и творческих целей. Немецкий ученый Г. Абих в своей статье “Ани” также вкратце говорит об исторической роли армянского народа в христианском мире, описывает памятники города Ани, который посетил в 1844 г. Восхищается величием этого города, сравнивая его с древним Римом, а его кафедральный собор считает шедевром мировой христианской архитектуры. Французский арменовед М. Броссе посвятил Ани два тома. Его труд содержит подробное описание конкретных монастырей и строений. Книга “Развалины Ани” написана на строго исторической основе: анализируя факты, ученый пытается выяснить, по какой причине этот богатый и великолепный город пал, что привело его к гибели. Труд “Развалины Ани” обобщает и завершает начальный этап аниоведения.

## THE CAPITAL CITY OF ANI IN THE EYES OF KH. ABOVYAN AND HIS CONTEMPORARIES

(To Kh. Abovyan’s 200th birth anniversary)

*AELITA DOLUKHANYAN*

### S u m m a r y

The capital city of Ani – the precious pearl of the kingdom of the Bagratids, occupies an exceptional place in the history of the Armenian people. Many European and Russian travellers, archaeologists, scientists and Armenologists have always been interested in the capital city of Ani. In this article the opinions of Kh. Abovyan – the founder of new Armenian literature and his two contemporaries – German scientist, geologist H. Abich and French Armenologist M. Brosset about Ani are considered. In 1847 Kh. Abovyan wrote his last extensive work dedicated to the capital city of Ani he had visited in the autumn of 1847. Apart from the description of his journey to Ani there are very valuable reflections in the article about the historical fate of the Armenian people, about the pain that they had endured because of all the sufferings and losses, the faith in the bright future and also his personal sufferings connected with unbearable difficulties in realizing his patriotic, pedagogical and creative goals. H. Abich also in his article “Ani” speaks briefly about the historical role of the Armenian people in the Christian world, describes the monuments of the city of Ani he visited in 1844. He admires the greatness of that city comparing it with ancient Rome and considering its cathedral a masterpiece of world Christian architecture. Armenologist M. Brosset dedicated two volumes to Ani. His two-volume work includes a detailed description of certain monasteries and constructions of the city. The book entitled “The Ruins of Ani” is written on the strict historical basis, analyzing facts and also trying to find out the reasons that led to the destruction of the downfall of this rich and wonderful city. “The Ruins of Ani” generalizes and completes the initial stage of Aniology.